



<< 02 >> 22 2017 թ.

N -----

**<<ՇՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ ԳԱԳԻԿ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 2017 թվականի մարտի 21-ի գրության, ներկայացվում է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմից արձակուրդում գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը.

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Մովսես Քարտաշյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանը և ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական Մանուկ Սիմոնյանը գտնվում են արձակուրդում և ընդգրկված են նախընտրական շտաբներում՝ քարոզչություն իրականացնելու նպատակով:

Աժ պատգամավորության 3 թեկնածուներ՝ ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Գագիկ Գաբրիելյանը, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Արմեն Դարբինյանը, աշխատակազմի Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ Ժաննա Թավակալովան ընդգրկված են <<Հայ հեղափոխական դաշնակցություն>> կուսակցության պատգամավորի թեկնածուների ցուցակներում և գտնվում են արձակուրդում՝ նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով:

Այլ դիմումներ արձակուրդից օգտվելու համար այս պահին չկան:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԵԿԱԼ՝

Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատ.' Ա. Հովհաննիսյան

Հեռ. 0237 2 42 62